



Գ. Մ. ՄԱՍԻԿԻՑՅԱՆ

«ՀԱՍԻՎԵՐՑՈՅՆ՝ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՅ»

11-րդ դարի ականավոր մատենագիր Ար. Լաստիկըցին¹ իր հանրահայտ Պատմության մեջ հայրենապիրական փոթորկուն պրտով գովերգել է Բագրատունաց Հայաստանի փառավոր անցյալը, խորն ու պրտակելեք որդով ողբացել քաղաքամայր Անիի, վաճառաշաբ քաղաքներ Արծնի, Կարինի և ընդհանրապես հայոց ամրոց բարեշն աշխարհի ավերուն ու ապականումը Բյուզանդիայի ու թուրք-սելջուկյան հրոսակամբերի կողմից: Նա միաժամանակ խարանել է այդ ապականմանը նախատղութիւն և երազել կենտրոնական, ինքնուրուն մի պատականություն, որտեղ արդարություն, առաջադիմություն, ազատություն ու քարեկեցիկ կյանք լինեն, որը ի մի հավաքվեն «զօրէն աստեղաց մոլորական կոչեցեց» աշխարհի տարրեր կողմերը ցրված հայորդիները:

Ար. Լաստիկըցին նովակիսի կրոստությամբ, նոյնակիսի հայահունչ գեղեցիկ լեզվով գրել է ճառը ու մեկնություն, որովք շատ հայանավոր մատենագիրների գործերի մեջ տարրեր դարերում արտագրվել են Շառընտիրներում: Նրա ստեղծագործության անքակտելի մասը կազմոյ այդ գործերն ունեն դավանարանական բովանդակություն, որտեղ դարի հայանավոր վարդապետներից մեկը պայքար է մեղել նաև քաղաքականության դեմ, որը նայ ժողովրդին այլ ճանապարհով ցանկանում էր գրել ինքնուրույնությունից և հայոց աշխարհը դարձնել Բյուզանդիայի հավելվածային մի ներկրամաս: Այդ գործերում Լաստիկըցին միմնապերում է հայ ուղղափառ նեղեցու ակզրութերը, միաբնակության ընդունման մեջ կապված ծեսերն ու տոնակատարությունները, որոնք դարձյալ անհաջող պայքարածն են

ընդդեմ քաղկեդոնականների: Հետևաբար, տվյալ ժամանակում ակնհայտ է եղել դրանց հայրենապիրական հշանակարությունը, մի քան, որը պետք է ամրող խորությամբ հասկացվի ու արժեքավորվի նայ մնացած երախտապարտ սերունդների կողմից:

Միջնադարյան Հայաստանում շատ են եղել Արիատակես անունով վարդապետներ, որոնցից մի քանիսը այլ գործերի մեջ գրել են ճառեր, քարոզներ, մեկնել Սատվածաշնչի ընթերցվածները և կ քանի որ նրանց ապրած ժամանակ կամ մետագայում գրիշները այդ աշխատանքները արտագրելիս բաց են թողել Ռոդինականները, ստործվել է կատարյալ շիփոր: Մինչև օրս, շատ մեղինականների, չեն քննվել համարի իրարից մի քանի դար ուշ կամ շուրջ ապրած Արիատակես վարդապետների այլ գործերը, բատկապես չեն առանձնացվել և ուսումնահրվել Ար. Լաստիկըցու գրածները:

Որքան մեզ հայտնի է, առաջինը Հ. Միք. Զամշյանն է հայտնել, որ Ար. Լաստիկըցին բացի Պատմությունից գրել է նաև դավանարանական ընույթի գործեր: «Գրեաց սա (Ար. Լաստիկըցին—Գ. Մ.) ըստ վաղելակիս շարագրութան իրում և զայլ բառում ճառու գեղեցիկն: Որոց զոման մա'րթ է տեսանել ի մին ճառընտիրս»²: «Նոր բաղդիք Հայկական ինորի» (Բար. առաջին, Վենետիկ, 1886, էջ 9—10) կազմողները խոսելով դրանցից երկուի՝ «Ծառ Արիատակիսի վարդապետի և մկրտութիւն Տեառն և ի փորձութիւն անապատի, կամ լութօրեա նաև կատարի զկնի յայտնութեան» և «Լաստիկըցյան» Մեկնութիւն ընթերցուածոց»-ի մասին, բուն բարութանում ձեռագրերից օգտագործել են նրանց հարուստ բարապաշտարը³:

¹ Մենք Արիատակեսին Լաստիկըցի ենք անվանում, ոչ թե Լաստիկըցի, Ականի ունենալով մինչև 17-րդ դարի ձեռագրերը, որոնցում նաև պահպան է կոչվում: Տե՛ս «Պատմութանական հանդես», Երևան, 1967, № 1, էջ 184—186:

² Հ. Միք. Զամշյան, «Պատմութիւն Հայոց», Խոր. Բ., Վենետիկ, 1785, էջ 988:

³ Ար. Լաստիկըցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ը դեռևս անտիկ է:

Այնուհետև, մասնակի տեղեկություններ կան միշտ բանասերների մոտ⁴, սակայն ինչպես նարկն է, ոչ միայն չեն ուսումնասիրվել Ար. Լատիվեցու դավանարանական աշխատանքները, այլև նրա «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի շուրջը շփոթ է ստեղծվել:

Հր. Աճառանք⁵ ըստ Ֆ. Մակլերի⁶ նշել է, որ Փարիզի ազգային գրադարանում է պահվում Ար. Լատիվեցուն վերագրվող ծննդան վերաբերյալ մի գրվածք, սակայն նոյն բանարանի վերջին հասուրի «Համելված»-ում (էջ 285) գրել է, որ Լատիվեցու անունով կա դարձաւ «Մեկնութիւն ընթերցուածոց», որպես աղբյուր նշելով Բ. Սարգսյանի Ձեռագրացուցակը⁷, իսկ այսուել Բ. Սարգսյանը նշանի է ունեցել Փարիզի ազգային գրադարանի ձեռագիրը: Եվ պատճեն, նոյն գործը կրկնվել է երկու անգամ ստեղծելով այն տպագրությունը, որևէ Փարիզի ազգային գրադարանում Ար. Լատիվեցու անունը (մեկը նրան վերագրվող, իսկ մյուսը փաստացի նրանը) երկու աշխատանք է պահվում:

Համանան շիրոֆ տեղի է տալիս Բ. Սարգսյանի վերոհիշյալ Ձեռագրացուցակը, որտեղ (էջ 1061) նա հաղորդել է: «Ծախս զաղափարութ (ճար Լատիվեցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ը է, իսկ զաղափարութ՝ Ար. Բագրատունին—Գ. Մ.) կը ծանօթագրէ, թէ զանի պարունակող քանի մը հնուտակ թուղթերը, որոնք շատ վաղեմ գրչութեամբ գրուած են, զանուուած են իշխան Մատենադարանի Հին թիվ 93 (հմտ. F. M. Catalogue, p. 100, № actuel 179), որ սակայն Յանիսի յօրինող իշխած չէ սոյն ճառը»: Եվ քանի որ Ֆ. Մակլերի այդ Ձեռագրացուցակում (էջ 156) 303 համարի տակ նշված է «Fragment d'Aristakes de Lastivert, sur la nativité» («Արիստակես Լատիվեցուցոց մի համան Ծննդի վերաբերյալ») ստացվում է, որ իշխակու Փարիզի ազգային գրադարանում Ար. Լատիվեցու անունով երկու ճառ կա, որից մեկը Ֆ. Մակլերը մոռացել է նշել իր Ձեռագրացուցակում, 179 համարի տակ:

Վերքերս Փարիզից ՀՍԽՀ գիտությունների ակադեմիայի արտասանմանա անդամ Սիրաբի Տեր-Ներսիսյանը ի պատասխան Մաշտոցի անվան

⁴ Ա. վրդ. Մուրադյանց, «Պատմութիւն Հայաստանայց առաքելական ս. եկեղեցուց», Երևանիմ, 1872, էջ 426: Հ. Գ. Զարքինանալյան, «Հայկական հին դպրութիւն», Վենետիկ, 1897, էջ 595:

⁵ Հր. Աճառանք, «Հակերէն արմատական բանարան», լոթերորդ հոդ., Երևան, 1935, էջ 42: «Հայոց ամենանունների բանարան», հոդ. Ա. Երևան, 1942, էջ 279:

⁶ Հր. Աճառանք, նշվ. աշխ., էջ 279—80:

⁷ F. Macler, „Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la bibliothèque nationale“, Paris, 1908, էջ 156.

⁸ Հ. Բ. Սարգսյան, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միթթարեանց ի Վենետիկ», հոդ. Երկրորդ, Վենետիկ, 1924, էջ 1061:

Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչկանի՝ մեր խնդրանքով գրած նամակին հայտնել է, որ Փարիզի ազգային գրադարանի նախկին № 93 ձեռագիրը երկու մասի է: բաժանված, մի մասը այժման 179 համարի ձեռագիրն է, մյուսը կրել է «Հայկական հավելված, 106» համարը (այժմ № 303), որտեղ գտնվում է Լատիվեցուց «Մեկնութիւն ընթերցուածոցը»:
Միաժամանակ նա հաստատել է, որ այսուել Ար. Լատիվեցուց միայն մեկ մեկնություն կա: Ֆ. Մակլերն էլ իր ծոցակում դիտել է այս բաժանումը: Այժման № 179 ձեռագիրը հիմն համարը 93-ն է: նշել (էջ 100, 180), իսկ ներկա № 303 ձեռագրի նկարագրի սկզբում գրել է: «Ժողովածուն կազմված է № 179 ձեռագրից դորս մնացած թղթերից» (էջ 155), իսկ վերջում դրել է № 303 ձեռագրի նախկին համարը՝ «Հայկական հավելված, 106» (էջ 156, 182):

Սակայն 1824—25 թվերին, երբ № 93 ձեռագրից այս մեկնությունը արտագրել է Ա. Բագրատունին⁹, իսկ 1864 թվականին՝ Վ. Պարոնյանը¹⁰, սույն հիմք ձեռագիրը դեռևս ամբողջական վիճակում էր: Այսպիսով, արդեն պարզ է, որ Փարիզի ազգային գրադարանում եղել է և այժմ էլ պահվում է Ար. Լատիվեցուց միայն մեկ Մեկնությունը, որը նշված է Ֆ. Մակլերի Ձեռագրացուցակում:

Մինչև այժմ տարրեր է նշվել նաև այդ Մեկնությունը պարունակող ձեռագրի գրչության թիվը: Ֆ. Մակլերը նշել է 13-րդ դարը¹¹, Բ. Սարգսյանը հայտնում է, որ ամբողջ ժողովածուն Բագրատունին արտագրել է 1274—1382 թվերի ընագրից, միաժամանակ տեղեկացնում է (ըստ Բագրատունու հաղորդածի), որ մեկնությունը ավելի հին գրչությամբ է գոված¹²:

Բ. Սարգսյանի մյուս տեղեկությունիցից պարզվում է, որ Փարիզի հիշյալ ձեռագիրը գրվել է հայոց ΠΩ (1281) թվականին, Հռոմելյանում, Թորոս գրչի ձեռքով, ի վայելումն Դավիթ Եպիփանութիւն¹³ (այս հիշատակարանը բառացի բերել է Ֆ. Մակլերը)¹⁴:

⁸ Հարգարժան Ա. Տեր-Ներսիսյանը ուղարկել է նաև այդ մեկնության մեծադիր լուսանկարը, որի համար հայտնում էնք խորին շնորհակալություն:

⁹ Հ. Բ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 1057:

¹⁰ Հ. Բ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 1223:

Ա. Բագրատունին և Ա. Պարոնյանը տարրեր ժամանակներում իշխակու արտագրել են նոյն ձեռագրից, քանի որ Երանք նշել են մինենյան համարը (93): Նրանք արտանեն-առանձին հաղորդել են, որ այս մեկնության ձեռագիրը քայլաված է և կիսատ, ու երկուսն էլ բերել են ավարտի նոյն տողերը: Ար. Լատիվեցուց «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի լոնդոնակարգությունները այժմ պահվում են Վենետիկի 294 և 310 համարի ձեռագրերում:

¹¹ F. Macler, նշվ. աշխ., էջ 156:

¹² Հ. Բ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 1058, 1061:

¹³ Հ. Բ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 1223:

¹⁴ F. Macler, նշվ. աշխ., էջ 100:

Հր. Աճաղամը¹⁵ Եշել է 1228 թվականը, չհայտնելով իր արքուրը: Բոլոր դեսպանում, երբ այլ փաստացի տվյալ չկա, որպես այս Մեկնության ձեռագիր գրչության ժամանակ պեսք է ընդունել Թորոս գրչի հիշատակարանի 1281 թվականը:

Մեկնության ձեռագիրը, դատելով նրա լուսանկարից, խիստ քաքրաված է, միշտ և վերջից որոշ թերթը ընկեր են, առանձին Եշելի ալիգոր և վերջ անընթեռնելի են: Ձեռագիրը թույր է, գրված է անցման բոլորգորմ, լուսանկարն ունի $29,3 \times 18,5$ մետրություն, որը տարբեր է Փարիզի ազգային գրադարանի № 179 և № 808 ձեռագիրի չափակից (ըստ Ֆ. Մալերի նրանց չափական են $28,5 \times 15$):

Այն ունի «Աստիվերցոյ» Մեկնութիւն ընթերցուած(ng)» խորագիրը, որն, Բարկալ, հիշատակում է Ար. Լաստիվերցուած, քանի որ տվյալ մականունը մեկ այլ մատունագիր չի եղել Բայ Բին և միշնադարյան գրականության մեջ: Թերևս նենց այդ պատճառով էլ մեր որոշ պատմչները ու գրիշները բավարարվել են Արիստականին միայն Լաստիվերցի անվանելով: Մատթ. Ուոնայեցին 11-րդ դարի նշանավոր Բայ վարդապետների թվում գրել է նաև «Սայյահանն և կամ Լասդիվերցին»¹⁶, իսկ Մխ. Ամեցին իրեն ծանոթ պատմիշների շարություն հիշատակել է: «...և Աստինիկ, և Լաստիվերցին, և Կողուան»¹⁷: Խնչպես երևում է, Մխ. Տարոնեցին, Ար. Լաստիվերցին և Հովհ. Տարոնեցին 12-րդ դարում այնքան հանրահայտ են եղել, որ մատունագիրը բավարարվել է միայն նրանց մականունները Հշելով: Հետևաբար հիմնավոր չէ: «Նոր բազիրը Հավագենան յեզուի» հանրահայտ բառարանը կազմողների այս առջիվ ունեցած կասկածանքը: «Աստ. ընթերց. Մեկնութիւն ընթերցուածոց՝ նովին Բայթ և ըստիր ոճով: Գոյց սա է և նշանակեալն ի վեր անդի՞՝ Արիստակ» («Նախարդունք», էջ 18): (Վերևում հշված են Ար. Լաստիվերցին և նրա Պատմությունը):

Ար. Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ը մկանում է հետևյալ տղթերով: «Տերն մեր Յիսուս Քրիստոս ծնա ի սուրբ Կուսէն, զի զինացեալ արարածն վերստին նորոգեաց», իսկ Վերջը, ինչպես ապկեց, թերի է: «Զի երրակի Տէրութեան Ամենասուրը Երրորդութեան սրբութեամբ արժանի լիցուք ծառանգել ուրախութեամբ զպատրաստեալ արքայութիւն նորա ի սկզբանէ աշխարհի սրբոց իւրոց, որոց լիցի մեր...»: Մեզ թվում է, որ Մեկնության Վերջից առանձնապես շատ պակաս չէ, քանի որ Հիսուսի Ծընթայան և Հայունության 8-րդ օրվա կապակցությամբ (Թիֆասություն) արդեն ընդարձակ տրված է: Եվ քանի որ 5-րդ, 6-րդ, 7-րդ օրերի մասին գրածները շատ ծավալուն չեն (այդ օրերի ընթերցվածների մեկնությունը համեմատաբար ամբողջական է մեզ Բա-

սել), որեւէն դժվար թէ Լաստիվերցին միայն վերջին օրվա կապակցությամբ շատ լայն մեկնություն գրեթէ:

Տունացոյցը, որի սկզբանական օրինակի կարգութիւն ու սահմանող համարվում է Սամակ Պարծևը, մկանում է Քրիստոսի Մննյան և Հայունության կանոնով¹⁸: Այս կանոնը կա նաև «Ծաշոց գրի» սկզբունք: «Կանոն սրբյ ծննդեան և յայտնութեան Քրիստոսի սաստուծոյ մարդոց¹⁹: Ծիշ է, շարակնոցները սկզբունք ունեն Սատվածածնի Մննյան կանոնը, սակայն, ուշադրության կենտրոնում Քրիստոսի Մննյան ու Հայունությունն են, նման պատկեր ենք տեսնում նաև «Յայսմատուրք»-ներում, Ծայրը տիրներում, Ժամագրերում ու Ժամանակագրություններում: «Արդ սկզբն և գլուխ ամենայն տանից տերունականց՝ տնաւունութիւն որդույն աստուծոյ՝ է տան ծննդեան և յայտնութեան տեսան...»²⁰. աս շատ վաղոց է սահմանելու և հիագործվելու: Ամեն թէ ինչու տերունական այս կարևոր տոնը (Քրիստոսի Մննյան ու Սկրոտությունը) վաղոց գրավել է օսարագիր Բայ նկենցական շատ հշանավոր մատունագիրների ուշադրությունը, որոնք այս տոնին նվիրել են Անդրդական ճաներ, մեկնել նրա խորհուրդը: Խնչպես տեսնում ենք, Քրիստոսի Մննյանը և Սկրոտությանը անդրադարձել է նաև Ար. Լաստիվերցին, որը գրել է այդ տոնի ընթերցվածների մեկնությունը: Բ. Սարգսյանը իր Ձեռագրացուածում այսպես է: գնահատել այդ Մեկնությունը: «Ցոյց հետաքրքրական է Մեկնարան ճառու, յորում նրբին աստուածաբանութեամբ կը ցուցեմ վարդապետս, թէ Յիսուսի Քրիստոսի հրաշախափ ծննդեամբ ինչպէս նորոգեաց վերինը և Անքինը, բաղաստեալ Մննյան և Աստուածապատութեան եօթին օրերը արարչութեան օրերուն հետո»²¹: Այս «Մեկնութիւն ընթերցուածոց»-ը չնայած ամրողական չէ, բայց եղածից էլ հնարավոր է եղակացներ, որ այն իսկապես ցոյց հետաքրքրական, ինքնուրույն և ինքնատիպ աշխատանք է՝ տարբեր Կ. Երուսալեմացու «Կոչումն ընծայութեան»²² ընթերցվածների մեկնությունից և Գր. Արշարունու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ից²³: Կ. Երուսալեմացին, օրինակ, առանձին ընթերցումներ է քաղել Աստվածաշնչից և տվել է դրանց մեկնությունը: Խնկ Գր. Արշարունու «Անպատակն է, գրին խորագիրն համաձայն, ծիսական երկու մեծագոյն տօներու, լատկապէս Ցայտնութեան և Ցարութեան իր պատրաստութիւն՝ երգուած Մարգարեական ընթերցուածներու մեկնութիւնը գրել, տրամադրելու համար հաւատացեալներու սրտերը քրիստոնէական երկու

¹⁵ «Տօնացոյց», աշխատասիրությամբ Սիմեոն Երևանցու, 1774, էջ 25:

¹⁶ «Ծաշոց գիրք», Վաղարշապատ, 1872, էջ 7:

¹⁷ Ձեռ. № 7448, էջ 327ա:

¹⁸ Հ. Բ. Արգիսյան, Եշվ. աշխ., էջ 1061:

¹⁹ «Երանելուն Կիւրոյի Երուսաղեմա հայրապետի Կոչումն ընծայութեան», Վիկոնտ, 1832:

²⁰ «Գրիգորիսի Արշարունու բրունիսիկուպուսի Մեկնութիւն ընթերցուածոց», 1964, Վիկոնտիկ, աշխատասիրությամբ Հ. Բ. Չրաբյանի:

¹⁵ Հր. Աճաղամն, «Հայոց անձնանունների բառարան», Բայր. Ե, Երևան, 1962, էջ 285:

¹⁶ Մատթ. Ուոնայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 179:

¹⁷ Ձեռ. № 2678, էջ 240ա:

զիմաստը յիշատակները արժանաւոր պատրաստութեամբ կատարելու»²⁴: Եր Մեկնության երեսունչորս գլուխներում, համաձայն Քառամօրյա պամիքի օրերի, ևս Հին Կտակարանի դեպքերը, մարգարելությունները համեմատում է Նոր Կտակարանի հորիթին, միաժամանակ բացատրում է Մենիի և Մկրտության մեկ տոն լինելը, Աստվածամայնության և Հարության տոների միմյանց լրացնելը և այլն:

Անշուշտ, Ար. Լատիկվերցին նկատի է ունեցել Կ. Երտասահեմացու և այլոց համապատասխան մեկնությունները, սակայն նրա հապատակը չի եղել ընթերցվածներ քաղել Աստվածաշնչից և բացահայտել նրանց իմաստը, պահիքը՝ չի ձգտել մեկնելու ա. Գիրքը Ար. Լատիկվերցու «Մեկնության ընթերցուածոց»-ը ավելի մոտ է Գր. Արշարունու Մեկնությանը, այն տարրելությամբ, որ Լատիկվերցին առաջ է դրել միմիացն Մենիի և Մկրտության տոնելի ութ օրերը և բացատրել այդ օրերի խորհուրդը՝ առաջնորդվելով Աստվածաշնչի համապատասխան ընթերցվածներով. Լատիկվերցին իր մեկնած առանձին օրերին ավելի լայն է անդրադարձել, ստեղծել է ոչ միայն մեկնություն, այլև ներքողել է Քրիստոսի Մունին ու Հայունությունը:

Նա ավելի համարձակ ու լայնորեն է Հին և Նոր կտակարանների համապատասխան հատվածների միջև զուգահեռ անցկացրել՝ նպատակ ունենալով ցանուուն դրսուրել Մենիի և Հայունության տոնի եղոյանը, ընդգծել Աստծու Որդու առաքելությունը, փառարանելու հրամա: Արարության յոթ տոնելի օրերի դիմաց («զվեցն գործոց և զևսներորդի հանճխառ») և ընդունված կանոնին մետսնելով՝ դնում է ութ օրեր և առանձին-առանձին մեկնում է դրանց հշանակությունը: Լատիկվերցին միայն ակնարկում է Քրիստոսի Մունյան և Մկրտության մեկ տոն լինելը, սակայն ավելի մանրամասնում է մարդու կողմից աշխարհի և ինքն իրեն ճանաչումը՝ «...այս ար երկին ոչ նոր ստացեալ եղել յանգոյից, այլ նոր ստացեալ եղել ի գիտություն մարդկան, իմանալով զնա, թէ արարած է եւ ամենայն, որ ինչ ի հմա, ոչ անել ըստ հեթանոսական բարքանշմանց»:

Սյունիթուն, երկիրը և հրանում եղած ամեն ինչ ևս գոյացած է համարում այդ օրը՝ ի տև մարդկանց: Պայքարի սպառելը ուղղելով մերձվածողներին, ևս ժմաստում է աշխարհի ինքնեղ կամ տարքեր արարիչներից ստեղծված լինելու հանգամանքը: Այս ամենի մասին մեկնելիս ևս ոչ միայն կենում է Աստվածաշնչից, այլև արձագանքում է ըստ ձեռագրերի Գր. Լուսավորչին, այժմ Մ. Մաշտոցին համարվող «Յաճախապատում ճառք»-ում և նշելի Կորլացու «Եղջ աղանդոց»-ում առաջ բաշված հարցերին, որտեղ ևս շշակված է մարդու ուղղելով մեթանուների դեմ, որոնց ասածները բարքաշահերներ են համարվել: «Յաճախապատում ճառք»-ի և «Եղջ աղանդոց»-ի ազդեցությունը կա նաև Լատիկվերցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի այլ հատվածներում:

²⁴ Գր. Արշարունի, Եզվ. աշխ., էջ 50—51:

Այն մեկնությունը, որն Արարչության և Հայունության չորրորդ օրերի զուգակցումն է, ձևոագրի էջերի ու տղերի եղծման պատճառով աղճատվել է:

Դրանից հետո Լատիկվերցին բացահայտել է 5-րդ օրվա խորհուրդը, «Եւ զարմ հինգերորդ պառս է առաջի դնել բանիս և ահա...»: Հիշատակելով Արարչության 5-րդ օրու շրերից կենացների առաջանալը, ևս Հայունության 5-րդ օրվա մասին գործ է. «Հինգերորդի հրամայի ժողովել ի լատու Զիթենեաց և անդ տանախմբել և լիսանց բարձանց լեալ յիշատակ սաղմոսիք և առաքելական և աւ- (տարա) նական ընթերցուածովք, քանի երգն սաղմու բարձրացուանել..., և ոչ էք մատուցեալ առ լեանց շաւշափելի²⁵ և գնաց, ասէ, Մարիամ (1)- եռնակողաց²⁶ ընթերցեալ լինի»: («Բարձրացուանելք») (Սաղմ. Ա. Ե., Հ. Հ. 5, 5): գրչագրական միաս պիտի լինի, քանի որ Ասղմոսի այդ հատվածները Զիթենեաց լուղ բարձրանալու մետ առնչություն չունեն, իսկ մինչև այժմ այդ օրվա համար երգիւմ է Մաղմոսից²⁷ «Բարձր արարէք» (Սաղմ. Ղ. Ը., 9, Զան՝ Ղ. Ը., 5): Սրբուակեսը շարունակում է մեկնել Արարչության 5-րդ օրու շրերից թուղուների ու ձեմնիրի ծննդի և Հայունության նոյն օրու մարդկանց Զիթենեաց լեող բարձրանալու և «կերանց բարձանց» հիշատակելու միջև եղած կապը: Նա գրել է, «Հինգերորդի սատ աւոր կապել ասի մեզ ի լատու Զիթենեաց սաղ- մոսիք և ընթերցուածաւր...»:

Մեզ թվում է, որ Մենիի ու Մկրտության (Զան տերունական այլ տոների) տոնակատարման շատ տարածված մի կանոն է եղել այս, քանի որ անգամ պասիսի խորագործ առանձին մեկնությունների ենք հանդիպում ձեռագրերում²⁸: Հաս որում այս կանոնը կատարվել է օրվա տարբեր ժամանին. «Ծաշյուն ժողովին ի Սուրբ լատու Զիթենեաց և այս կանոն կատարի...»²⁹: Աստվածամայնության միուս օրերի կապակցությամբ Լատիկվերցին դարձայ նման կա- նոններ է առաջ քերում. «Սրբ տեսցուք և զիտրուրուր վեցերորդ աւոր, քանզի անդ ասաց արացուք մարդ ըստ պատկերի մերում և աստ պատար հրամայի մեզ ժողովի (հ) Լազարյուն և աւետարանա լիշատակել զարդութիւնն Ղազարու...»: Ղազարի հարության նոյն հատվածը, որը մենք գտել ենք Մաշտոցի ան- վան Մատենադարանի № 7443 մեծադիր Ծառընտի- րում, բացատրված է մետկալ ձևով. «Ղան ապր վե-

²⁵ Թուղթ առ երբագեցին, ԺԲ, 18:

²⁶ Ավելուարան Ղոկասի, Ա, 89:

²⁷ Միենու Երևանցի, «Տօնացոյց», էջ 31:

²⁸ Զեռ. № 7448, էջ 470p:

«Եւ նոյն ժամոյն կանոն ի լատու Զիթենեաց և անդ կատարեն զերկորեան պաշտամն»: Նոյնը տե՛ս Ն. Պողարյան, «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», Խոր. Երկորդ, Երևանի, 1958, էջ 5: Ի լուցումն վերը ասածի, այսուղ կա նաև. «...և յար ի նոյն զիտուուն զիշերույն»:

²⁹ Ա. արք. Արտիմեյան, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երտասահեմի սրբոց Յակոբեանց վանքի», առաջին հոդ., 1948, Վենետիկի, էջ 61:

ցերորդ աւոր կանոնն Ղազարու հրամա(1) է զմեզ ժողովի ի Ղազարյան և սաղմուն բարձր տոնեմ զքիզ...»³⁰: Ծիշու է, Լաստիվերցու մոտ Ավելուարանն է Եղված, իսկ այստեղ՝ Սաղմուն, ասկան «հրամայողը» բռնոր դեպքերուն Ղազարի հարության կանոնն է: Ուրեմն, Ար. Լաստիվերցին չստ առանձին օրերի մեջնորդ Ծննդի և Մկրտության ընթերցվածները, առաջնորդվել է ընդունված կանոններով:

Լաստիվերցին մնացած օրերի մասին նոյնական հետաքրքիր համեմատություններով ու բացառություններով շարունակել է իր մեկնությունը: Նա իր Մեկնությամբ ոչ միայն հարվածել է ամեն կարգի մերձակածողների, այլև պաշտպանելով միաբնակությունը, Ծննդյան և Մկրտության մեջ տուն լինելը և այլ բարցեր, փաստության դեմ, իսկ այդ պաքարել է քաղկեդնեականության դեմ, իսկ այդ պաքարը, ինչպես վերը ասել ենք, ուներ հայրենասիրական Շխատառություններ:

«Մեկնութիւն ընթերցուածոց»-ը կուր է իր լեզվամտածողությամբ: Առանձնապես ակնառու է մատենագիր մուածողությամբ այստեղ դրսուրված նրբությունն ու պարզությունը, համեմատություններ կատարելով վարկատությունը, խոսքի պատկերավորությունը, պերճ գրաքարի մետ աշխարհաբարյան ձևերի օգտագործումը և այլ բարեմասնություններ, որոնք միանգամայն բարվական են պարզորոշ ընդգծելու Ար. Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի լեզվական բարձր մշակույթը: Մեկնությունում ոչ միայն օգտագործված են հայոց լեզվի հարատությունները, այլև կազմված են նոր բարդություններ կամ եղածները հազվադիպ կիրառում են գրավոր խոսքի մեջ: Օրինակ, Ար. Լաստիվերցին իր Պատմությունում ունի «Գագագեն» բառը՝ կատար, ծայր սովորական իմաստով: «Յորժամ զիասկիցն զիասկիցն զիասկիցն»³¹: Նա այդպես էլ բացարձի է իր «Նոր Կիրակեն» գիտեցիկ ճառում: «Որի ի կատար ընթացիցն ցուցանէն զիասկիցն»³²: Իսկ այստեղ, Բավանաբար, մենց ինքը նոր բառ է կազմել՝ «գագագենանապ», որը չեզոք սեփի բառ է և Եղանակի է «վերանալ, բարձրանալ իրուն գագագեն, կամ մինչև գագագեն»³³: Լաստիվերցին գրել է: «Ոչ կարացին բարձրանալ և գագագենանալ»: «Այլ զինի Քրիստոփ բարձրացեալ եւրա ամեներեան ի լառու տեսն առ աստուած, գագագենացեալը ի բարձրութիւն վերին Երևանաշեմ»³⁴:

Լաստիվերցին ունի նաև «որովայնամոյեալ» բայցածը: «Եւ միւսովն ոչ զաշոտութեամբ որովայնա-

մոյեալ նման Եւայի...»: Այն կազմիւած է «որովայնամոյ» ածականից³⁵:

Բազմաթիվ բարդ և ածանցակոր բառերի մեջ պատկեր Լաստիվերցին գործածի է «կենդանագործութիւն», կենդանատեղներ, կենդանատեղութիւն, կենդանացուցակ («կենդանացոյց»), ինչպես նաև «կենդանեեալ, կենդանատեղնել» («կենդանատեղնել»): «Յակարածակի յական թաթափիկ ի փող յատին և կենդանեեալ կացուցակ զամենիւան»: «Եւ այս ինքն կենդանատեղնել զամենայն ծնունդու Արամայ»: Այս ընդգծված բառերում, մեր կարծիքով «ան» մասնիկի չինընդու գրչի բաց բողոք չէ: Երկի մինևոյն էջուն նոյնատիպ բառերից խոտափելու նկատառություն Լաստիվերցին դիմել է նորակազմությունների, կենդանի բարի արմատը համարելով «կենդ»-ը:

(Հայ Հր. Աճառյանի կենդանի բարի բուն արմատն է «կեն(ա)»-ն, նրանից կազմվել է «կենա»-ը, որի անշեշա ձևն է «կեն»-ը: «Կենա» արմատը կազմվել է անսորդից, «Ե» մասնիկի ավելացումով: Այնուհետև ամել է «կենան» արմատը՝ «կենդ»-ի վրա «ան» մասնիկի ավելացումով)»³⁶:

Մեծամարավ լեզվամանի այս բացատրությունը և ձեռագրում եղած կրկնակի փաստը մեզ հիմք են տալիս նեթաբեկու, որ Լաստիվերցին «կենդանի» բարի արմատը համարելով «կենդ»-ը, ու նոր բառեր կազմելով, չի սխալվել, հետևաբար բերված միշտ չէ: Երա կազմած այդ բառերից մեջի նոր սրբագրությունը: «Նա ինքն կենդԱՆատեղնել զամենայն ծնունդու Աղայան յատուր յատուր յատուրման»³⁷:

Ար. Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի այլին մանրաբին ուսումնակիրությունը թողելով հետաքային, մենք պատեղ ցանկանում ենք շշափել բանակիրական երկու կարուր նարց: Առաջինը, որ սառ մեզ, խիստ ուշագրաք է, մարդու բարձրացման, նրա հոգեկան հարատությունների վեր համանա գգուումն է, որը բազմաթիվ երանգներով դրսուրվել է 10—11-րդ դարերի հայ վայ վերածնության նոյնականության մեջ: Մարդու հոգու փոխորկումները, նորը արդումները ու տվյալանքը, որոնք արտահայտել եր հանձարեղ բանատեղ Գր. Նահանջակին, արձագանքվել են 11-րդ դարի ականավոր մատենագիր Ար. Լաստիվերցու Պատմության, «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի և այլ գործերի մեջ: Մասնակիրական այս բնանոլող Մեկնության մեջ Լաստիվերցին, միշտ է, ասովածարանական հայունի դրույթներից ելեզով, բայց և Քրիստոսի Մկրտության օրինակով շեշտել է մարդու մաքրագործման, ամբողջ կույժամբ նորացման և ասովածացման խնդիրը: Քրիստոսը «ասա ոչ հրամանա, այլ անձամբ իրով կատարեաց կրմնակի առաւել, քան

³⁰ Զեռ. № 7448, էջ 848թ—849թ:

³¹ Ար. Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1968, էջ 104:

³² Զեռ. № 2715, էջ 6ա: Այս ճառին մենք անդրադարձել ենք առանձին:

³³ «Նոր բառգիրը Հայկակեան լեզուին», Բար. Ա., էջ 519:

³⁴ Արանք միակ օրինակներ են ՆՀԲ-ում (Բար. Ա., էջ 519):

³⁵ ՆՀԲ-ում (Բար. Բ, էջ 535) այս բարի օգտագործման բնագրային փաստ է բերված Մի. Գոշից և Ար. Լաստիվերցու Մեկնությունից:

³⁶ Հր. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», Բար. Գ, Երևան, 1980, էջ 1116—1118:

³⁷ «Նոր բառգիրը Հայկակեան լեզուին», Բար. Ա., էջ 1086:

զառաջինն զկենդանատեղորթին մեր, բանզի ան ձեռաւը ստեղծ մարդն, և ասս ոչ ձեռաւը զայլը ստեղծ, այլ ինքն անձամբ իրով ի Կուսէն ընկալեալ մարմին, ստեղծագործեցաւ մարդ որպէս և ինքն կամեցաւ, և եղին երկրորդ սկիզբն ազգի մարդկան,

փոխանակ առաջին մարդոյն ինքն ընդ մեզ եղել մարդ ծննդեամբ ի Կուսէն զի զմեզ ընդ իր արացէ աստուածս ծննդեամբ աւազանին»: Հետաքրիր է, որ այս հատվածը թափանցնել է Ծաղընտիրների և «Յայսմաւորք»-ի մեջ:

Տառընախիր

(Ձեռ. № 7443, էջ 350ա, № 2042, էջ 43ա)

«...ի Կուսէն առեալ մարմին ստեղծագործեցաւ մարդ որպէս ինքն կամեցաւ: Աստուած միացեալ ի մարմնի. և եղին երկրորդ ազգի սկիզբն, մարդ փոխանակ առաջին մարդոյն. ինքն ընդ մեզ և աստուած և մարդ ծննդեամբ ի Կուսէն, զի զմեզ արացէ աստուած ծննդեամբ աւազանին»:

Ուշագրավ է, որ Գր. Նարեկացին ինքն էլ նախապէս նման ձևով մեծաքելով մարդուն, այնուամենապէս այդ մասին պատկեն խոսելը «ասմավոր» է համարել. «Են զոր ամառոր է ասել, կարգեմ աստուածը յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց, աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին, և ընդ հաստողիդ միանալ տէրունի մարմնոյն ճաշակմամբ, և ընդ լուսոյն կինաց հասնութեամբ»³⁸:

Այն ժամանակաշրջանում մարդու նման բարձրացման հիշտ ընկալումը մասնավորապես գտնում ենք 14—15-րդ դարերի ականավոր փիլիսոփա և աստվածաբան Գր. Տաթևացու մոտ: Նա գրել է. «Զայն է իմանալ՝ զի թէկէս իրէշտակը շորիք պատաւորը են, բան զմարդիկ. այլ գալստեամբն Քրիստոսի մարդիկ գերապատիք եղեն, բան զիրէշտակն. որպէս այս սուրբն Գրիգոր Նարեկացին: Են զայն ցուցանում տասն կերպիս»³⁹: Այսունո՞ւ Գր. Տաթևացին իրեն հաստոկ խորությամբ ու մորքի ընկննությամբ նոյական մեկնորյացն է տվել, որտեղ բացահայտել է մարդկանց տասը առավելությունները նրեշտակների ըկատմամբ: Այդ մեկնորյուններից մեկը ձևակերպված է իր մեծ նախորդ Վարպետների բացատրությունների նետուրամբ: «Չորրորդ զի ուսեկու և ըմպելով զաստուած՝ աստուածամբ. և նոքա ոչ ունին զայն»⁴⁰:

Բանափրական նետաքրքրությունն ներկայացնուող մյուս խնդիրը Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի՝ այլ վարդապետների գործերի մետ միավորած՝ Ծաղընտիրների և «Յայսմաւորք»-ի մեջ բափանցելն է: Այս կարևոր է ոչ միայն որոշելու այդ միավորած մոտավոր ժամանակը, այլև վերականգնելու Լաստիվերցու այս մեկնորյան առանձին հատվածները, որոնք, ինչպես ասացինք, միակ հիմք ձեռագրի տեղ-տեղ եղծման պատճառով անընթե-

Գիրք, որ կոչի Սամաւորք

(Կ. Պոլիս, 1730, արացի է, հունվարի ԺԲ)

«...ի Կուսէն առեալ մարմին ստեղծագործեցաւ որպէս և ինքն կամեցաւ, ծննդեամբ մարդ ի Մարդիամա՝ զի զմեզ աստուածս արացէ ծննդեամբ սուրբ աւազանին»:

Ենի են դարձել, կամ մոտավորապես նշելու այդ ձեռագրից կորած 3—4 էջերի բովանդակությունը: Մի շարք Ծաղընտիրներում կան Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի ազդեցությամբ գրված Ծննդի և Հայունության ոյո օրերի մեկնություններ⁴¹:

Ամենամբրոջականները Սաշտոցի Մատենադարանի № 7443 ձեռագիր մեծ Ծաղընտիրն (1852—53 թ.) ու Երուաղեմի և Հակոբյանց վանքի նոյնական մեծացիր № 145 Տոնապատճան⁴² են (1858 թ.), որոնք համարյա նոյն ժամանակ արտագրվել են Ղրիմու: № 7443 ձեռագրում (էջ 322ը) նախորդ Ծորեկից գլխազարդով անշատված կա մետուկալ խորագիրը. «Սուրբ Վարդապետացն ասացեալ վասն յայտնութեան և ծննդեան տեսան և հաւատոյ հաստատութեան ընդրեմ երկարամակացն վկա(յ) ուժեամբն Տեառներապան և Կիրոյի Երուաղեմի հայրապետին»: (Ակզբանտողը. «Յորժան որ կամիցի...»): Այնունեան կան մետուկալ Ծորեկիցը. «Յեկեղեցական պատմութեմն զոր երկրորդեալ է Սարկանափ Վարդապետի» (էջ 825ա): «Սամուէլի և Պատոսի և այլոց Վարդապետացն վերալուծութիւն ընթերցուածոց գորոց» (էջ 826ը): 328ա—362ա էջերուն նոյն թէմայի շորջը այլ Ծորեկի կան, որոնց մեջ են նաև Լաստիվերցու Մեկնության ազդեցությամբ գրված «Պատճանաւորք»-ները (էջ 384ը—355ա):

Դրված է նոր գլխազարդ, որից մետու սկսվում է

⁴¹ Ձեռ. № 2042, № 7443, էջ 334ը—355ա: № 2042 ձեռագիրը (ԺՌ դար) գրված է ավելի հմտու գրչի ձեռքով, բայց սկզբանափը, ինչպես երևում է, տեղաւոր եղծված է եղել: Անա թէ ինչու կան հաւատվածներ, որոնք ավելի ճիշտ են տրված, բան № 7443 ձեռագրում, սակայն որոշ տեղեր ել հասկացվում են մյուս ձեռագրի գորգարությամբ. առանձին բաներ բաց են թողնված, մետու ավելացված են ենթարրաբար, որոնք այնպիս չեն ձևվում բնագիրն, ինչպես № 7443 ձեռագրում:

⁴² Ե. ևս. Պոլարյան, «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբյանց», Խոր. Երկրորդ, Երուաղեմ, 1953, էջ 4:

³⁸ «Սրբյ օրու մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 133—134:

³⁹ Գր. Տաթևացի, «Գիրք բարողութեան, որ կոչի Սամաւորք», Կ. Պոլիս Խմ՛ջ (1741), էջ 661:

⁴⁰ Գր. Տաթևացի, Եշվ. աշխ., էջ 661:

այլ հյութ. «Պատճառք առաջար պահոցն» (էջ 862ա):

Ծառ փոքր տարրերությամբ հյութերի համա դասավորություն կա նաև Երուաղեմի և Հակոբյանց վանքի № 145 Տոնապատճառում և Մաշտոցի Սատենարարակի ԺԴ դարում գրված № 2042 ձեռագրում: Այս խոսում է անշոշու մի պահին միմբ ձեռագրի մասին, որտեղ իշխանու եղել են միննույն հյութերը և այն է նման դասավորությամբ⁴³: Այստեղ ամենառաջարավը «Սամուկի և Պատղուի և այլոց Վարդապետացն»...» է, քանի որ նրա հյութը համընկնում է Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ին: Տարրեր վարդապետների գործերը ի մի թերու մեզ անհայտ մեղմակը այդուղ գրում է. «Արդ բազումք ի Վարդապետաց կամ խնդրոյս այսորիկ մեծա աշխատութեամբ փոյք ի յանձն առեալ երկայնածիկ պատմութեամբ զասացեցոց բացայատեցին զյուրիուրու և ոչ եթէ մեք մերով առքառ և Բի(1) ծ բանիս զնցաց ջանն աղարտել կամիմք, գործ առաջ ի եղաք, այլ ի նոցանէ յամեննունց զագուակարն ի մի հաւաքելով իրը ի բազմագումակ ծառկանց պասկ հիւսեղով կամ ցսու արինակի երկուուսան ականցն ընդուանելոցն ի պատմուան քահանա(1) ին, որով շքեանայր ի ձեռն վակասին, զոր կրօնոց կոչեն: Այսան և ին ի նոցաց աշխատութեանցն զկարուրուն համապատար հաւաքելով ի զարդ վայելչութեան ուսումնակը անձանց»⁴⁴: Արդո՞ք բնական է, որ պաքան ընդարձակ խոսքի մետու թերվի շատ փոքր մի հյութ, եթէ հաջորդը (էջ 828ա) մի այլ մեղմակի համարենք: Անշոշու, անքնական կիներ, մանավանդ, որ հաջորդ հյութերն է իրենց թեմայով Մենիի և Մկրտության վերաբերյալ են և այն է հավաքված մի քանի վարդապետների գործերից: Անզամ խորագրով անջատված «Պատճառք առաջար պահոցն» աշխատանքի հյութը ձևափոխված է հավաքարար նոյզ մեղմակի ձեռքով: Հայունի է, որ Հովհ. Վարդապետ Տառեցեցին (Վանական վարդապետ) 1181—1251) ունի «Պատճառք վասն առաջարորաց պահոցն»⁴⁵, որն ակավում է «Յոյուք են բանք վասն այսր պահոց, այլ զակասն ասացուք փոխանակ բազմաց...»⁴⁶: Անհա այս գործն է, որ արտագրված է ձառնատիրում, շատ որում նոր մեղմակից կրելով

⁴³ № 2042 ձեռագրի (ԺԴ դար) հյութերը նոյզն պետք է նման դասավորություն, ական «Սամուկի և Պատղուի և այլոց Վարդապետացն վերալուծութիւն ընթերցուածոց գրոց»-ից մետու այլ հյութ է հաջորդում. չկամ Մենիի և Հայունության օրերի մեկնությունները: Խակ № 2045 ձեռագրը (ԺԴ դար) պարտվում է այլ հյութով, որտեղ ևս չկա միշյալ ութ օրերի մասին:

⁴⁴ Զետ. № 7443, էջ 826թ:

⁴⁵ № 1952 (ԺԴ դար) և № 4822 (1491 թ.) ձեռագրերը նոյզն հյութի վերնագրում ունեն «Պատճառք վասն առաջարորաց պահոցն» արարեալ (կամ սասցեալ) վանական վարդապետի վասն հակառական և պապանուացն զսուրք պահս»:

⁴⁶ Զետ. № 714, էջ 105ա:

փոփոխություն. «Բազում պատճառք են առաջար պահոցն, բայց զակասն ասա(ս)ցոր ուսումնափառց»⁴⁷: Հիշենք, որ «Սամուկի և Պատղուի և այլոց Վարդապետացն...» հյութի սկզբունք մեղմակը նոյզն պետ մտամովլում էր «ուսումնակը անձանց» համար: Պրատումները ցուց են տալիս, որ նման մի գործ պետք է, որ գրված լիներ 18-րդ դարի առաջին տասնամյակից⁴⁸ մինչև 1281 թվականը, քանի որ այդ ժամանակի մի ձեռագրում կա «Սամուկի և Պատղուի և այլոց Վարդապետացն վերալուծութիւն ընթերցուածոց» գրոց»-ը⁴⁹:

Խակ թե Փարիզի ազգային գրադարանի № 93 ձեռագրում, երբ այս չեր բաժանված, ամրողովին կ'ար մեզ մեղմակը այդուղ գրում է. «Արդ բազումք ի Վարդապետաց կամ խնդրոյս այսորիկ մեծա աշխատութեամբ փոյք ի յանձն առեալ երկայնածիկ պատմութեամբ զասացեցոց բացայատեցին զյուրիուրու և ոչ եթէ մեք մերով առքառ և Բի(1) ծ բանիս զնցաց ջանն աղարտել կամիմք, գործ առաջ ի եղաք, այլ ի նոցանէ յամեննունց զագուակարն ի մի հաւաքելով իրը ի բազմագումակ ծառկանց պասկ հիւսեղով կամ ցսու արինակի երկուուսան ականցն ընդուանելոցն ի պատմուան քահանա(1) ին, որով շքեանայր ի ձեռն վակասին, զոր կրօնոց կոչեն: Այսան և ին ի նոցաց աշխատութեանցն զկարուրուն համապատար հաւաքելով ի զարդ վայելչութեան ուսումնակը անձանց»⁵⁰: Սիրթն նոյզն ձեռագրում գրիշը մինչույն թեմայի վերաբերյալ կարտագործ համարյա իրար կրկնող երկու հյութ (Ակատի ունենք Լաստիվերցու այս Մեկնությունը և նրա ազդեցությամբ գրված Մենիի և Հայունության տոնի «Պատճառք աւուրք»-ը):

Ձեռագրական նոր ուվանելոր, իմարկեն, կարող են սպիրի պար դարձնել այս վիճելի հարցոց: Ակնուամեազնիվ, դատելով առկա հյութից, մեզ թվում է, որ այն միննույն անձնավորության ձեռքով է ի մի հա-

⁴⁷ Զետ. № 2042, էջ 57ա, № 7443, էջ 862ա:

⁴⁸ Վանական Վարդապետի «Պատճառք վասն առաջարորաց պահոցն» այս ժամանակից շոտ գրված լինել չեր կարող:

⁴⁹ Հ. Բ. Սարգսյան, Առյանը, էջ 1280:

Այստեղ Բ. Սարգսյանը տեղեկացնում է, որ այս մեկնությունը կիսան է. «Մնացեան ամրող կը պակսի, և կամ զարափորդն զանց ըրած է օրինակեն: Սամուկը՝ Կամրջանորեցին է հաւանօրէն, իսկ Պատղուն՝ Տառօնացին»: Այս հյութը գտնվում է վեճետիկան № 910 ձեռագրում, որը, ինչպես վերևում ասել ենք, 1864 թվին արտագրված է Փարիզի Ազգային գրադարանի թիվ 98 (ըստ Բ. Սարգսյանի նոր թիվ 179 ձեռագրից): Սակայն Ֆ. Մակենի Ցուցակում այդ հյութը չկա: Որ այդպիսի հյութ չկա № 179 ձեռագրում, կարող ենք երեկ Ա. Տեր-Ներսիսյանի վերջնու գրած նամակի հետևակա տողերը.

«Այդ ձեռագիրը կպարունակն միայն նկասե Շնորհու և Գրիգոր Տղայի նամակները, որոնք արդեւ հրատարակված են Ցուցակին մեջը: Ասված է, թե Միհիթը Գոշի Դատաւանագրի վերջավորությունը կա, բայց այդ միշտ չէ, այդ մասը կորսված է, և միայն էջ 1-ի հիշատակարանին մեջ դատաստանագրին ակնարկությունը կա»: Այս փաստը մեկ ավելորդ անզամ ապացուցում է, որ Փարիզի Ազգային գրադարանի № 98 (ինը թիվ) ձեռագիրը երկու մասի բաժանելիս (№ 179 և № 808), հավանաբար նենց այս ժամանակ, այդ ձեռագրից վերցվել են որոշ հյութեր, այդ թվում «Սամուկի և Պատղուի և այլոց Վարդապետացն...» մեկնությունը:

վարված, ըստ որում նա եղել է նշանավոր և բանիմաց մի վարդապետ, քանի որ այլ թեղինակներից քաղելով հյութը, ինքն էլ է լրացրել, դրեւ մի կուռ ամրողության մեջ: Նա միաժամանակ Ծննդի և Հայունության ութ օրերին վերաբերող հատվածներին առանձին-առանձին ավարտուն տեսք է տվել, մինչդեռ Ար.

Ար. Լաստիվերցի, «Մեկնութիւն ընթերցուածոց»

«...Յառաջին արարչագործութեան գոյացոյց զերկին վերին և զերկիր, զջոր, զաւոր, զմոր, զիրեշտակու: Եւ զիրեշտակու⁵⁰ կյան արարածոց լանգոյիցն ըստ ասացլոցն աւորս եւթն կարգեաց. զվեցն գործոց և զերեներորդն հանգիստ աստուծոյ անուանեալ: Եւ աստ դարձեալ ի նոր արարչութեան այն թուով աւորց տառնախմբեմք, միով միայն առաելեալ թուով, որ ի հանդերձեալսն հայեցուցանէ զամենիսեան և փոխանակ...»:

Կարող ենք այսպիսի շատ օրինակներ բերել, ապացուելու մեր ասածը, բայց կարծում ենք արդեն պատկերը պարզ է:

Եթե Ար. Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ից հանենք այս Ծաղընտիրում եղած գործի հման հատվածները, ապա տեղում թիշ բան կմնա: Սա կորմնակի ճանապարհով ապացուցում է, որ Ծաղընտիրի այդ հյութը կազմողը իսկապես օգտվել է Լաստիվերցու, ոչ թե մեկ այլ աղբյուրից, որից գուցե և օգտված լինելու Լաստիվերցին:

Այլապես դուրս կգա, որ Արքանական մեծ մասամբ քաղել է ուրիշից, մինչդեռ ենց ինքը յոթերորդ օրվա մեկնությունում խսել է իր գործի ինքնուրույնության մասին: Նա գրել է.

«Արդ որայիսութիւն խորհրդոց հպարագունիցն և իմաստնոց յայտ է, բայց մեզ տկարագունիցն որպէս հասանելի է ողորմութեամբ աստուծոյ, ասացուր...»:

Ինչպես ասացինք, Ար. Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի աղջեցությունը կա նաև «Յայսմատորք»-ի վրա, սական ոչ բոլոր խմբագործությունների: Այդ կա միայն Գր. Խոլաքցու խմբագործ «Յայսմատորք»-ում⁵¹, քանի որ տեր Խորայելի⁵² և

⁵⁰ Հատվածի աղճատումը հնարավոր է վերականգնել ըստ ձեռ. № 7448-ի:

⁵¹ «Գիրք որ կոչի Այսմատորք», Կ. Պոլիս, 1780: (Այս աղջեցությունը տես՝ Ծննդան և Հայունության հինգերորդ (արացի Գ, Բունվարի Ժ), Վեցերորդ (արացի Դ, Բունվարի ԺԱ) և յոթերորդ (արացի Ե, Բունվարի ԺԲ) օրերի «Պատճառ աւորք»-ներում):

⁵² «Յայսմատորք» ըստ կարգի ընարկագոյն օրինակի յայսմատորք տէր Խորայելի», Կ. Պոլիս, 1884:

Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ում այդ ամենը խիստ շաղկապահ են միմյանց են: Այդ թեղինակը Լաստիվերցուց հաճախ քաղել է ոչ թե նոյնությամբ, այլ կրծառելով կամ նոր հավելումներ կատարելով: Բնորնեք զուգամեռ մի բնորոշ օրինակ.

Ձեռ. 7448

Էջ 885ա

«Ըստ առաջնոյն տեսանեմք կարգեալ զամենացն, զի յառաջին աւորն գոյացոյց զերկինան հրեշտէն, զվերին և զգիրեշտակու և զլոյս և ապա զերկիր և զգոր և զաւոր և զմոր և զստ եւթն արարածոց կարգեաց աւորս եւթն զվեցն գործոց և զերփն հանգիստ աստուծոյ կոչեաց և դարձեալ ի նոր արարչութեան զնոյն թիսն տառնախմբեմք, միով միայն առաելեալ թուով, որ ի հանդերձեալսն հայ(1) եցուցանէ զամենիսեան և փոխանակ...»:

Կիրակոս Արևելցու (Գանձակեցի)⁵³ խմբագրածներում չկա Ծննդան և Մկրտության տոնի «Պատճառ աւորք»-ը: Ըստ որում Ծննդի և Հայունության ութ օրերի մասին Ծաղընտիրների և «Յայսմատորք»-ների այս հյութների կազմողները տարրեր մարդիկ են և աչքի առաջ չեն ունեցել միմյանց գործերը: Նրանք իրարից անկախ օգտվել են Ար. Լաստիվերցու Մեկնությունից: «Յայսմատորք»-ում աղճքան մեծ չէ: այս Մեկնության աղջեցությունը, որքան Ծաղընտիրներում է:

Այն փաստը, որ Ար. Լաստիվերցու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ը աղճքան լամբուն օգտագործված է Ծաղընտիրներում և «Յայսմատորք»-ում, ցոյց է տալիս դարեւ շարունակ այլ գործի հարգի լինելը ու անհրաժեշտությունը հայ առաքելական եկեղեցու ոչ միայն Ակզրումբների պաշտամության առումով, այլև առօրյա ծիսական պետքերի համար:

Ամփոփելով վերը շարադրածը, ավելացնենք, որ այսքանով չի ավարտվում «Մեկնութիւն ընթերցուածոց»-ի արժանիքների բացահայտումը: Ար. Լաստիվերցու գեղեցկակոյու Պատճության մես միասին ինչպես այս, աղճան էլ նրա դավանարանական մյուս գործերի ավելի խոր ու մանրագնին ուսումնասիրությունը միայն հնարավոր կողաքնի իսկակին ճանաչելու 11-րդ դարի հայ մեծ հայրենասեր մատենագրին և արծքափորելու մեզ հասած նրա գրական անուանակի վաստակը:

⁵³ Ձեռ. № 4684, (1407 թվ.):